ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2022 թվականի N 193-Ա

ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Լ. Գալստյանի* անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար ***Լուսինե Գալստյանին*** տրամադրել *2021* թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասը աշխատանքային օր՝ 2022 թվականի հունիսի 15-ից մինչև հունիսի 28-ը ներառյալ:

2. ***Լուսինե Գալստյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ ***Անուշ Ղազարյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության հաշվապահ ***Անուշ Ղազարյանին*** և «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար ***Կարեն Սահակյանին*** ապահովել «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Իրինա Խեչոյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի հունիսի 15
ք. Հրազդան